ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 26-Լ

«22» 05 2026 թ. ք. Երևան

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ, ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՆԱԽՈՐԴՈՂ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ, ՍՏՈՒԳԵԼՈՒ, ԸՍՏ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 7-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ընտրության և դրան նախորդող օրվա ընթացքում ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումները, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները և ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով ստացված ահազանգերը (այսուհետ՝ ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումներ) գրանցելու, հաշվառելու, ուսումնասիրելու, ստուգելու, ըստ ենթակայության ուղարկելու, այդ հաղորդումների քննարկման և դրանց հիման վրա նախաձեռնված քրեական վարույթների նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու և այդ ոլորտում Հայաստանի

Հանրապետության դատախազության գործունեությունը համակարգելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ընտրության և դրան նախորդող օրվա ընթացքում ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումների գրանցումը, հաշվառումը, ուսումնասիրությունը, ստուգումը, ըստ ենթակայության ուղարկումն ապահովելու, ինչպես նաև այդ հաղորդումների քննարկման, դրանց հիման վրա նախաձեռնված քրեական վարույթների նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու և այդ ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ)՝ հետևյալ կազմով՝

Աշխատանքային խմբի ղեկավար՝ Աննա Վարդապետյան (ՀՀ գլխավոր դատախազ), **աշխատանքային խմբի անդամներ՝** Լիլիթ Գրիգորյան (ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ), Արամ Արամյան (ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ), Գրիգոր Էլիզբարյան (ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ), Եղիազար Ավագյան (ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ), Ռաֆայել Մանուկյան (Երևան քաղաքի դատախազ), Արմեն Փանոսյան (ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ), Արտակ Հարությունյան (ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ), Վարուժան Ղահրամանյան (ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության պետ), Հայկ Հովհաննիսյան (ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով

վարչության պետ), Լևոն Զարխիֆալակյան (ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ), Միեր Մկրտչյան (ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ), Կարեն Հարությունյան (ՀՀ զինվորական դատախազի տեղակալ), Արսեն Վարդանյան, Շիրակ Խաչատրյան (Երևան քաղաքի դատախազի տեղակալներ), Սերգեյ Առաքելյան (ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության պետի տեղակալ), Շուշանիկ Իսրայելյան, Մամիկոն Մարտիրոսյան (ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալներ), Վահագն Պողոսյան, Գորիկ Հովակիմյան (ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալներ), Ծովակ Մնացականյան, Արսեն Գևորգյան, Դավիթ Հարությունյան (ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազներ), Արբակ Զաքարյան, Արթուր Դանիելյան (ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազներ), Հրանտ Ներսիսյան, Անդրանիկ Շահբազյան (ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազներ), Տիգրան Մուրադյան (ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ), Միեր Ափրիկյան (ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար), Վահե Հովհաննիսյան (ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ), Լուսինե Մարտիրոսյան (ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական), Արևիկ Խաչատրյան (ՀՀ դատախազության հանրային կապերի բաժնի պետ), Արևհատ Ստեփանյան (ՀՀ դատախազության հանրային կապերի բաժնի գլխավոր մասնագետ), Նունե Խաչատրյան (ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությանն աջակցող բաժնի պետ, աշխատանքային խմբի քարտուղար), Լուիզա Նազարեթյան (ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժնի պետ, աշխատանքային խմբի քարտուղար):

2. Աշխատանքային խմբին՝

1) ուսումնասիրել 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ընտրության և դրան նախորդող օրվա ընթացքում ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումները, լուծել դրանց ենթակայության հարցը,

2) գործնական աջակցություն ցուցաբերել ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների դատախազներին ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումների քննարկման, նախաձեռնված քրեական վարույթների նախաքննության նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելիս,

3) ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումների քննարկման, նախաձեռնված քրեական վարույթների ամփոփման արդյունքներով պատրաստել և սահմանված կարգով աշխատանքային խմբի ղեկավարին ներկայացնել համապատասխան տեղեկանքներ,

4) սերտ համագործակցություն ապահովել իրավապահ մյուս մարմինների, դիտորդական առաքելություն իրականացնող և շահագրգիռ այլ կազմակերպությունների ու անձանց հետ,

5) ապահովել կատարված աշխատանքների հրապարակայնությունը:

3. Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի դատախազներին, զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին՝

1) ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումները քննարկել և դրանց ընթացք տալ սեղմ ժամկետում,

2) ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումների քննարկման և քրեական վարույթների նախաձեռնման, դրանց ընթացքի մասին մեկօրյա ժամկետում հաղորդումներն ուղարկել աշխատանքային խմբի ղեկավարին,

3) անհրաժեշտության դեպքում, ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ նույնաբնույթ հաղորդումների քննարկման, դրանց հիման վրա նախաձեռնված քրեական վարույթների ընթացքի, ինչպես նաև բարդ ու տարաբնույթ

մեկնաբանությունների տեղիք տվող հարցադրումներով միասնական պրակտիկա ապահովելու նկատառումով, խորհրդակցել աշխատանքային խմբի ղեկավարի կամ նրա հանձնարարությամբ՝ աշխատանքային խմբի անդամների հետ, կազմակերպել քննարկումներ:

4. ՀՀ դատախազության հանրային կապերի բաժնին՝

1) համացանցի ամենօրյա ամբողջական մշտադիտարկման արդյունքներով իրականացնել ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հրապարակումների, հաղորդումների էլեկտրոնային գրանցումը և հաշվառումը, արդյունքները՝ ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակով, մինչև քվեարկության օրը և քվեարկության օրվանից հետո 3 ժամը մեկ պարբերականությամբ, իսկ քվեարկության օրը՝ 30 րոպեն մեկ պարբերականությամբ, ներկայացնել աշխատանքային խմբի ղեկավարին,

2) կազմակերպել ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումների քննարկման և կայացված որոշումների օպերատիվ լուսաբանումը՝ ապահովելով դրանց հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

5.Աշխատանքային խմբի անդամներ Լիլիթ Գրիգորյանին, Գրիգոր Էլիզբարյանին և Արմեն Փանոսյանին՝

1) յուրաքանչյուր շաբաթվա երկրորդ օրը՝ մինչև ժամը 11^{00}-ն, իսկ քվեարկության օրը՝ 3 ժամը մեկ, ամփոփ տեղեկանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին՝ ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումների, դրանց գրանցման, հաշվառման, ընթացքի և արդյունքների մասին,

2) անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին ներկայացնել համապատասխան տեղեկատվական-մեթոդական ուղեցույցների նախագծեր:

6. Աշխատանքային խմբի քարտուղարներին՝

Ընտրախախտումների վերաբերյալ գրագրություններով վարել առանձին գործավարություն:

7. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

8. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության

վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ